ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. հոկտեմբերի 16-ից 19-ը Հնդկաստանի Հանրապետություն (ք. Մումբայ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Գնել Սանոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հնդկաստանի Հանրապետություն (ք. Մումբայ), հոկտեմբերի 16-ից 19-ը:

4. Հրավիրող կողմը

Հրավերը ստացվել է Հնդկաստանի Հանրապետության նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների նախարար Սարբանանդա Սոնովալից:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցել Հնդկաստանի Հանրապետության համաշխարհային ծովային գագաթնաժողովին (GMIS 2023): Ունենալ երկկողմ հանդիպումներ ոլորտային գործընկերների հետ:
Մասնակցել Չաբահարի նավահանգստի թեմայով կլոր սեղան-քննարկմանը:

6. Քննարկված թեմաները

Հնդկաստանի Հանրապետության նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների նախարար Սարբանանդա Սոնովալի հետ հանդիպման ժամանակ կարևորվել է հայ-հնդկական հարաբերությունների ընդլայնման համատեքստում ոլորտային համագործակցության խորացման

անհրաժեշտությունը, ինչպես նաև ենթակառուցվածքային ոլորտում հնարավոր համագործակցության վերաբերյալ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մասնակցել եմ Հնդկաստանի Համաշխարհային ծովային գագաթնաժողովի բացման արարողությանը:

Հոկտեմբերի 16-ին՝ Գագաթնաժողովի (GMIS 2023) մասնակցության շրջանակներում հանդիպել եմ Հնդկաստանի արտահանման-ներկրման բանկի գլխավոր մենեջեր Նիրմիթ Վեդի հետ: Քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում ենթակառուցվածքային մի շարք ծրագրերի, մասնավորապես՝ ճանապարհաշինության և դպրոցաշինության ծրագրերում հնդկական կողմի ֆինանսական, խորհրդատվական, այդ թվում աշխատուժի և տեխնիկական ներգրավվածության գործնական հնարավորությունները:

Դարձյալ Գագաթնաժողովի շրջանակներում հանդիպել եմ «Shapoorji Pallonji And Company Private Limited holding»-ի ներկայացուցիչների հետ: Այս ընկերությունը 15 խոշոր ընկերությունների համաշխարհային, դիվերսիֆիկացված կազմակերպություն է՝ մասնագիտացված շինարարության, ենթակառուցվածքների, անշարժ գույքի, ջրային, էներգետիկ և ֆինանսական ոլորտներում:

Ներկայացրել եմ տարբեր ոլորտներում առկա շինարարական ծրագրերը: Մասնավորապես շեշտադրվել է դպրոցաշինության, ճանապարհաշինության ոլորտի ծրագրերը և դրանցում Ընկերության հնարավոր ներգրավվածության վերաբերյալ հարցերը: «Shapoorji Pallonji» ընկերությունը հետաքրքրություն է ցուցաբերել հատկապես դպրոցաշինական ծրագրերի նկատմամբ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել վերոնշյալ ծրագրերի մասին հանգամանալից տեղեկատվություն ներկայացնել ընկերությանը՝ ներառելով ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների, աշխարհագրական տեղակայման, արտաքին նկարագրերի մասին տվյալներ: Ընկերությունը ուսումնասիրություն կատարելուց հետո ներկայացուցիչներ կգործուղի Հայաստան՝ տեղում գործընթացի հնարավորություններին և խնդիրներին ծանոթանալու նպատակով:

Հանդիպել եմ նաև «Larsen & Toubro» ընկերության փոխնախագահ Մադհավա Դասի հետ: Մումբայում տեղակայված գլխամասային գրասենյակ

ունեցող Larsen & Toubro Limited-ը Հնդկաստանի մասնավոր հատվածի ամենամեծ և ամենահեղինակավոր ընկերություններից մեկն է:

Ավելի քան 80 տարվա հաճախորդակենտրոն մոտեցմամբ և համաշխարհային մակարդակի ստանդարտներով՝ L&T-ն ունի մեծ հնարավորություններ տեխնոլոգիաների, ճարտարագիտության, շինարարության և արտադրության ոլորտներում և պահպանում է առաջատարի դիրքը իր բիզնեսի բոլոր հիմնական ուղղություններում:

Հանդիպման ժամանակ ընկերությունը հետաքրքրություն է ցուցաբերել հատկապես էներգետիկ ոլորտում շինարարության ծրագրերի վերաբերյալ, քանի որ հատկապես ենթակայանների շինարարության ոլորտում ունի հարուստ և հաջողված փորձ աշխարհի առաջատար և զարգացող երկրներում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում արդեն Հայաստանում ծանոթանալ համագործակցության հնարավորություններին:

Հոկտեմբերի 18-ին կայացած Զաբահարի նավահանգստի թեմայով կլոր սեղան-քննարկմանը կլոր սեղանի ժամանակ ելույթ եմ ունեցել «Հայաստանը՝ տարածաշրջանային հաղորդակցության խաչմերուկ» խորագրով:

Ելույթով ընդգծել եմ, որ Հայաստանում՝ լինելով դեպի ծով ելք չունեցող երկիր, որի սահմաններն Արևելքից և Արևմուտքից երեք տասնամյակ շարունակ ցամաքային շրջափակման մեջ են, հանդիսանում է տարածաշրջանային և միջսահմանային ներառական և անաչառ կապի խթանման հավատարիմ ջատագով: Հայաստանի ճանապարհային ցանցը լուրջ ներուժ ունի այս նպատակին հասնելու համար: Հայաստանի կառավարությունը ջանքեր է գործադրում երկրի համապատասխան ենթակառուցվածքների վերականգնման և արդիականացման ուղղությամբ՝ իրականացնելով Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը, որը, Հայաստանի կարողությունները բարձրացնելով, երկրին հնարավորություն կտա լիարժեք մասնակիցը դառնալ ինչպես Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքին, այնպես էլ հաղորդակցության այլ նախաձեռնություններին:

Այս կարևոր ռազմավարական ճանապարհի կառուցումը կդյուրինացնի Հայաստանի հարավային սահմանից դեպի վրացական սահման և մինչև Սև ծովի նավահանգիստներ երթևեկությունը և թույլ կտա իրականացնել ավելի շատ ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Եզրափակելով ելույթս՝ վերահաստատել եմ միջազգային գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի միջև առավել ընդլայնված համագործակցության և համակարգման համատեղ ուղի ձևավորելու ուղղությամբ բոլոր գործընկերների հետ աշխատելու Հայաստանի լիակատար հաստատակամությունը՝ տարածաշրջանային և գլոբալ առավել արդյունավետ կապի խթանման գործում նշանակալից առաջընթաց գրանցելու համար:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Առաջարկ է հնչել հետևողականորեն աշխատել 7-րդ և 8-րդ կետում նշված պայմանավորվածությունները կյանքի կոչելու ուղղությամբ:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

24.10.2023 թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 12.10.2023թ.1016-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Գնել Սանոսյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) ՀՀ ՏԿԵ նախարար
4. Գործուղման վայրը Հնդկաստանի Հանրապետություն /Մումբայ/
5. Գործուղման ժամկետները 16.10-19.10.2023թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ 2023թ. ՀՀ պետական բյուջեից
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը			**Ընդամենը** (դրամ)
Ճանապարհա ծախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**335070**	**335070**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	***0***	***0***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	54	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	21727	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	***86908***	***86908***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր		**0**
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***421978***	***421978***

1$=402.35 դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան

25.10.2023թ.